

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

- Ընթացիկ հաշվետվություն
- Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն
- Տարեկան հաշվետվություն

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» բաց բաժնետիրական ընկերություն,
ԵՈԳ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը, ազգանունը)
Բաց բաժնետիրական ընկերություն

կազմակերպական - իրավական ձևը
ք.Երևան 0023, Արշակունյաց, 12 հեռ. 52-53-21, ֆաքս 52-57-13 www.yerjewel.com

գտնվելու վայրը, հասցեն, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլ-փոստ և այլն)

N 9 09 .07.2012թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը` **սովորական**
արժեթղթերի քանակը` **1.095.340 հատ**
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)` **1000**

«Մենք` ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք`

Ազատուհի Մակարյան	գլխ. հաշվապահ	09 .07.2012թ.	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)`

Էմիլ Գրիգորյան	գլխավոր տնօրեն	09 .07.2012թ.	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ) Կ.Տ.

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ
Տարեկան հաշվետվություն

2011թ

Հասցե	ք.Երևան 0023, Արշակունյաց փ, 12
Հեռախոս	52-53-21
Ֆաքս	52-57-13
Էլփոստ	Info@yerjewel.com
Ինտերնետ կայք	www.yerjewel.com

Ս/թ հունիսի 28-ին տեղի ունեցավ Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոնոն» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

Ներկայացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կազմակերպման և վարման ժամանակ առաջացած հետևյալ փաստաթղթերը.

1. Ընկերության տնօրենների խորհրդի 20.05.2012թ. կայացած նիստի արձանագրությունը (N 2 Խ-12):
2. Կարեկան ընդհանուր ժողովի արձանագրությունը (N 2Ժ-12):
3. Հաշվիչ հանձնաժողովի N 1, N 2 և N 3 արձանագրությունները:
4. Գլխավոր տնօրենի ընկերության 2011թ. գործունեության վերաբերյալ հաշվետվություն:
5. 2011թ. գործունեության ֆինանսական վերլուծությունը:
6. Բաժնետերերին բաժանված հետևյալ նյութերը.
 - ժողովի օրակարգը;
 - Քվեաթերթիկի օրինակը;

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2 Խ-12

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ տնօրենների խորհրդի նիստի

ք. Երևան

20.05. 2012թ.

Ներկա են ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ տնօրենների խորհրդի հետևյալ անդամները՝

Էմիլ Գրիգորյան - խորհրդի անդամ - ԵՈԳ -1 « Գնունոն » ԲԲԸ Գլխ. տնօրեն

Արմեն Գրիգորյան - խորհրդի անդամ - ԵՈԳ -1 « Գնունոն » ԲԲԸ Ս / Տ տնօրեն
Սեդա Հակոբյան - խորհրդի անդամ

Հովհաննես Եսայան - խորհրդի անդամ - ԵՈԳ -1 « Գնունոն » ԲԲԸ Ա / Տ տնօրեն

Էդուարդ Մաթևոսյան - խորհրդի անդամ - « ԵՈԳ » ԲԲԸ իրավաբան

Արկադի Տարգաշով - խորհրդի անդամ

Քարտուղար՝ Արշալույս Ներսեսյան:

Ձեկույցով հանդես եկավ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ Գլխավոր տնօրեն Է. Գրիգորյանը, որը տեղակացրեց, որ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջները ապահովելու նպատակով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է կայանա մինչև 2012թվականի հունիսի 29 -ը:

Այս կապակցությամբ որոշեցին՝

Ընկերության 2011թվականի գործունեության տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել 2012թվականի հունիսի 29-ին, ժամը 16.00, ք.Երևան, Արշակունյաց 12 հասցեում:

Հաստատել ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հետևյալ օրակարգը՝

1. Ընկերության 2011 թվականի գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2011 թվականի ֆինանսական գործունեությունը ամփոփող

տարեկան հաշվետվության հաստատում:

3. Ընկերության 2011 թվականի շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:

4. Ընկերության վերահսկողի հաշվետվության հաստատում:

5. Տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

Անդամներ՝

Է.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

Հ. ԵՍԱՅԱՆ

Է. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ա. ՏԱՐԳԱՇՈՎ

քարտուղար՝

Ա. ՆԵՐՍԵՍՅԱՆ

Ընկերության 2011թ. ֆինանսական գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվությունը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

կողմ` - 969776 դեմ` - 0 ձեռնպահ` - 0

Ընկերության 2011թ. շահույթի և վնասի հաշվետվությունը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

կողմ` - 969776 դեմ` - 0 ձեռնպահ` - 0

Երևանի Ոսկերչական Գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ 2010թվականի գործունեության արդյունքով Ընկերության բաշխման ենթակա շահույթը կազմում է 114.272.0 հազ.դրամ: Դրա 5% -ը ուղղել պարտադիր պահուստավորման ֆոնդին , 63 648.0 հազ.դրամը ուղղել բաժնետերերին շահաբաժին վճարելուն:

Շահաբաժինը վճարել 2012թվականի հունիսի 10-ից մինչև 2012թվականի օգոստոսի 30, որի վճարը կատարվում է ք.Երևան Արշակունյաց 12 հասցեում Ընկերության դրամարկղից: Մեկ բաժնետոմսին ընկած շահաբաժինը 58.11 դրամ է:

Օրակարգի 4-րդ հարցի շուրջ առաջարկությամբ հանդես եկավ Է.Գրիգորյանը: Նա նշեց,որ ժողովի հաստատմանը պետք է ներկայացվի Ընկերության վերստուգիչի 2011թվականի հաշվետվությունը:

Բաց քվեարկությամբ առաջարկը ընդունվեց միաձայն:

Ընկերության վերստուգողի 2011թվականի հաշվետվությամբ հանդես եկավ Լիլիթ Սուքիասյանը: Նա նշեց, որ հաստատում է հաշվապահական և ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը:

Վերստուգողի 2011թվականի հաշվետվության հաստատման հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

կողմ` 969776 դեմ` - 0 ձեռնպահ` 0 :

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ տնօրենների խորհրդի անվանական կազմը քննարկումներից հետո դրվեց գումարային քվեարկության և ստացավ հետևյալ քանակությամբ ձայներ:

1. Հրանտ Շիրինյան	կողմ`	969776	դեմ` - 0	ձեռնպահ` 0
2. Արմեն Գրիգորյան	կողմ`	969776	դեմ` - 0	ձեռնպահ` 0
3. Էմիլ Գրիգորյան	կողմ`	969776	դեմ` - 0	ձեռնպահ` 0
4. Արկադի Տարգաշով	կողմ`	969776	դեմ` - 0	ձեռնպահ` 0
5. Սեդա Հակոբյան	կողմ`	969776	դեմ` - 0	ձեռնպահ` 0

6. Էդուարդ Մաթևոսյան կողմ՝ 969776 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ 0

7. Յովհաննես Եսայան կողմ՝ 969776 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ 0

Ժողովը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Ընկերության 2011թ. գործունեության տարեկան հաշվետվությունը հաստատել:

2. Ընկերության 2011թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվությունը հաստատել:

3. Ընկերության 2011թ. շահույթի և վնասի հաշվետվությունը հաստատել:

4. Վերստուգողի 2011թվականի հաշվետվությունը հաստատել:

5. Տնօրենների խորհուրդի անդամներ ընտրել հետևյալ անձանց՝

Յրանտ Շիրինյան - ԲԺԻԶԿ,

Էմիլ Գրիգորյան - ԵՈԳ -1 « Գնունոն » ԲԲԸ Գլխավոր տնօրեն,

Արմեն Գրիգորյան - ԵՈԳ -1 « Գնունոն » ԲԲԸ Գլխավոր տնօրենի տեղակալ,

Սեդա Հակոբյան - Ճարտարագետ ,

Էդուարդ Մաթևոսյան - « ԵՈԳ » ԲԲԸ իրանական հարցերով խարհրդական,

Յովհաննես Եսայան - ԵՈԳ -1 « Գնունոն » ԲԲԸ Գլխավոր տնօրենի տեղակալ,

Արկադի Տարգաշով - ԵՈԳ -1 « Գնունոն » ԲԲԸ Գլխավոր տնօրենի

Ժողովի օրակարգը սպառվեց, և հայտարարվեց նրա փակումը:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Է. ԿԱՖՅԱՆ

ԵՈԳ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ
2011 թ. գործունեության հաշվետվություն

Ընկերության արտադրության ուղղություններն են՝

- ոսկերչական իրերի պատրաստում և վաճառք,
- թանկարժեք քարերի մշակում և վաճառք,
- ոսկյա ժամացույցների / նաև թանկարժեք քարերով /, թանկարժեք և գունավոր մետաղներից մեղալների, հուշամեդալների պատրաստում և վաճառք,
- ոսկերչական արտադրության սարքավորումների, հարմարանքների, գործիքների պատրաստում և վաճառք,
- ոչ թանկարժեք մետաղներից / ալյումին / դետալների արտադրություն, փականների արտադրություն:

Ընկերությունը աշխատել է շահույթով: Իրացման ծախսերը կազմել են 34492 հազ. դրամ: Բարձ են նդել վարչական ծախսերը՝ 81885 հազ. դրամ: Տարածքների վարձակալությունից եկամուտները կազմել են 15320 հազ. դրամ:

Ունենք դեբիտորների մեծ փաթեթ, որը դժվար է կրճատվում:

Ընկերության հասույթը, ապրանքների և ծառայությունների իրացումից կազմել է 1.465.429 հազ. դրամ:

2011 թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում գուտ շահույթը կազմել է 69682 հազ. դրամ:

Ընկերության արտադրանքի իրացման ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է ոսկու համաշխարհային ճգնաժամով և շուկայում միջին գների անկանոն տատանումներով, իջել են ծավալները ՌԴ-ում և միջինասիական պետություններում:

2011 թ. ընթացքում չի աշխատել թանկարժեք քարերի մշակման արտադրամասը, որի հիմնական պատճառը հումքի ձեռք բերման բարդություններն էին և նաև շրջանառու միջոցների պակասությունը:

Պետք է նշել, որ Ընկերությունը այսօր աշխատում է ոչ լրիվ հզորությամբ:

Աշխատանքներ են տարվում հումքի անխափան ձեռք բերման համար:

Նաշվի առնելով ներկա ֆինանսատնտեսական իրավիճակը, անհրաժեշտ է

- ձեռնարկել միջոցառումներ ԵՈԳ-1 «ԳՆՈՄՈՆ» և ԵՈԳ-ի միջև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հավասարակշռության վերականգման համար,
- ակտիվացնել գործողությունները ներքին շուկայում ծավալները մեծացնելու, նպատակ ունենալով այդ շրջանառությունը հասցնել ընդհանուր տարվա ծավալի / տարեկան վաճառքի / 7 %:
- Ակտիվացնել կապերը ԵՈԳ-ի փորձարարական տեղամասի հետ, նոր իրերի մշակման և ներդրման նպատակով”
- ավարտել ալյումինե աքսեսուարների մասսայական արտադրության կազմակերպման և ներդրման գործընթացը, ի նկատը ունենալով նաև ՊՆ պահանջարկը,
- ներդնել ֆինանսատնտեսա կանխատեսումների ծրագրերի,:
- Ներդնել ֆինանսատնտեսական կանխատեսումների ծրագրերի համակարգը,
- Մշակել տնտեսապես հիմնավորված պարզևատրումների կանոնակարգը,
- կազմակերպել նոր արտադրատեսակների իրացում,
- բրենդային իրերի արտադրություն,
- Էլեկտրոնիզացիոն դրոշմների արտադրություն,

- 11 մեղալիների արտադրություն
- 3 տնտեսի ժամացույցների արտադրություն

Նշված միջոցառումների կատարումը կնպաստի Ուկրաինայի աշխատանքների բարելավանը ներկայիս բարդ ֆինանսական –տնտեսական իրավիճակում:

Գլխավոր Տնօրեն

Է.Գրիգորյան

ԸՆԿԵՐՈՒՅՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ

2011թ.

Նկատի ունենալով 2011թ. Երևանի Ոսկերչական գործարան-1 Գնումն ԲԲԸ տարեկան ֆինանսական հաշվետվությունը, ներկայացնում են ընկերության 2011 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ որոշ տվյալներ.

Ընկերության ընդհանուր ակտիվները հաշվետու տարվա վերջի դրությամբ կազմել է 5559820,0 հազ.դրամ, այդ թվում ոչ ընթացիկ ակտիվները 2851100,0 հազ.դրամ, ընթացիկ ակտիվները՝ 2708720,0 հազ.դրամ, որոնք կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար 51.28% և 48.72%-ը:

2011թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում հաշվետու տարվա շահույթը շահութահարկի գծով ծախսը նվազեցնելուց հետո կազմել է 69 682.00 հազ.դրամ:

Հաշվապահական հաշվառման կազմակերպման համար պատասխանատու է գլխավոր տնօրենը:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվում է 1Ը- Ձեռնար-կություն հաշվապահական ծրագրով:

Ա. Մակարյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ – 1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲԸ-ի 2011թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների հավաստիության մասին

Ք. ԵՐԵՎԱՆ

« 04 » « մայիսի » 2012թ.

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ – 1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲԸ-ի 2011 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ճշտելու նպատակով Ընկերության Վերստուգող հանձնաժողովի կողմից իրականացվել է Ընկերության հաշվետվություններում և ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիության ստուգում: Ստուգումը իրականացվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքների, Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերի, Ե Ո Գ – 1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲԸ-ի Վերստուգող հանձնաժողովի գործունեության կանոնակարգի համապատասխան:

Ստուգումը սկսվել է 2012թ. ապրիլի 9 -ին և ավարտվել է մայիսի 2-ին:

Ստուգմամբ պարզվեց.

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ – 1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲԸ ստեղծվել է ՀՀ Կառավարության 2000թ. դեկտեմբերի 31-ի թիվ 907 որոշման, ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարության 16.01.2001թ. թիվ 9 հրամանի համաձայն: Ընկերության գրանցման թիվ 286.120.01380, գրանցման օրը՝ 12.06.1995թ., վկայական՝ 01 Ա 013836:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է՝

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ օրենսդրական այլ ակտերով և իր կանոնադրությամբ:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի և թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, կիսաֆաբրիկատների արտադրություն և վաճառք, նոր տեխնոլոգիաների մշակում, ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1 095 340 000,0 դրամ, որը կազմում է 1 095 340 հատ սովորական անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի

անվանական արժեքը կազմում է 1000 դրամ: Բոլոր 1 095 340 բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, ընդհանուր ղեկավարումն իրականացնում է տնօրենների խորհուրդը, իսկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը:

Ընկերության կառուցվածքում հաշվապահությունը գործում է որպես առանձին ստորաբաժանում:

2011 թվականին Ընկերությունը գույքի, պարտավորությունների և տնտեսական գործառնությունների հաշվառումը վարում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2000թ. դեկտեմբերի 29-ի թիվ 319 հրամանով հաստատված կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերի համաձայն:

Հաշվապահական հաշվառման կազմակերպման համար պատասխանատու է գլխավոր տնօրենը: Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվում է 1C-Ձեռնարկություն հաշվապահական ծրագրով:

Վերստուգող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ղեկավար մարմինների որոշումների կատարման ընթացքը, ստուգվել են փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին: Արձանագրվել են որոշ թերություններ հաշվապահական հաշվառման և ինքնարժեքի հաշվարկման ձևակերպման մեջ, որոնք ընթացքում ճշտվել են:

Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մնացորդը 01.01.2011թ.-ի դրությամբ կազմել է 288106,0 հազ. դրամ, իսկ 01.01..2012թ.-ի դրությամբ այն կազմել է 2792166 հազ. դրամ:

Ընկերության **գույքագրման** հանձնաժողովի կողմից իրականացվել է հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների գույքագրում: Գույքագրման արդյունքների վերաբերյալ հանձնաժողովի կողմից կազմվել և ներկայացվել են ցուցակներ, որտեղ նշվել են՝ հիմնական միջոցի անվանումը, տիպը, մարկան, գույքային համարը, փաստացի քանակը, վիճակը:

Գույքագրման գործընթացի ուսումնասիրություններից պարզվեց հետևյալը՝

- ա/ գույքագրման արդյունքները կազմվել և ներկայացվել են ռուսերեն բլանկների վրա,
- բ/ գույքագրման ցուցակներում առանձին դեպքերում բացակայում են գույքահամարները, գրառումներում կան ջնջումներ, կան մատիտով գրառումներ:

Ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային մնացորդը 01.01.2011թ.-ի դրությամբ կազմել է 16599,0 հազ. դրամ, իսկ 01.01..2012թ.-ի դրությամբ այն կազմել է 8735,0 հազ. դրամ:

01.01.2011թ. դրությամբ Ընկերության դեբիտորական պարտքերը վաճառքների գծով կազմել են 1200936,0 հազ դրամ, իսկ 01.01.2012թ. դրությամբ Ընկերության վաճառքների գծով դեբիտորական պարտքերը կազմել են 737083,0 հազ.դրամ:

Ընկերությունում հիմնադրամներ, ինչպես նաև անհուսալի դեբիտորական պարտքերի դուրս գրման համար պահուստ չի ստեղծվում:

2011թ.-ին Ընկերությունը գործարքները իրականացրել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հետ:

Ընկերության գործարքները հիմնականում վճարվում և ստացվում են բանկային փոխանցմամբ, բացառությամբ առհաշիվ անձանց և ընկերության ֆիրմային խանութների միջոցով իրականացվող գործարքների: Հաշվարկային հաշվի մնացորդների ընտրանքային կարգով կատարված ստուգումից տարբերություններ չեն հայտնաբերվել: Բանկային հաշիվներով դրամական միջոցների հաշվառման գործընթացը բավարարում է ՀՀ գործող օրենսդրության պահանջներին :

01.01.2011թ. դրությամբ գնումների գծով կրեդիտորական պարտքերը կազմել են 2 491 068,0 հազ.դրամ, իսկ 01.01.2012թ. դրությամբ կրեդիտորական պարտքի մնացորդը կազմել է 2 035 355,0 հազ.դրամ:

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 1465 429,0 հազ.դրամ, գործառնական այլ եկամուտները կազմել են 58 542,0 հազ.դրամ, իսկ ինքնարժեքը կազմել է 1 289 579,0 հազ.դրամ, իսկ գործառնական այլ ծախսերը՝ 38064,0 հազ.դրամ:

2011 թվականին Ե Ո Գ – 1 «ԳՆՍՍՈՆ» ԲԲԸ-ի շահույթը կազմել է 87036,0 հազ. դրամ: 01.01.2012թ. դրությամբ շահութահարկի գծով Ընկերությունը պարտք չունի:

01.01.2012թ. դրությամբ ԱԱՀ-ի գծով Ընկերության պարտքը պետբյուջեին կազմել է 4869,4 հազ. դրամ,

01.01.2012թ. դրությամբ եկամտահարկի գծով Ընկերության պարտքը պետբյուջեին կազմել է 2009,0 հազ. դրամ:

01.01.2012թ. դրությամբ գույքահարկի գծով Ընկերության պարտքը պետբյուջեին կազմել է 372, 0հազար դրամ:

01.01.2012թ. դրությամբ այլ վճարների գծով Ընկերության պարտք կազմել է 912,0 հազար դրամ:

01.01.2012թ. դրությամբ սոցապ.հարկի գծով սոցիալադրամի նկատմամբ Ընկերության պարտքը պետբյուջեին կազմել է 2822,0 հազ.դրամ:

Ընկերության ֆինանսական կայունության և իրացվելիության վերլուծությունը:

Ֆինանսական կայունության վերլուծություն.

1. Ֆինանսական անկախության գործակից: Այն ցույց է տալիս, թե ընկերության ընդհանուր միջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Այլ կերպ, այն սեփական կապիտալի տեսակարար կշիռն է կազմակերպության ընդհանուր կապիտալում:

$$Q1 = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} = \frac{3087625}{5559820} = 0,55$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0.5: Այս ցուցանիշի ցածր մակարդակը ցույց է տալիս, որ ընկերությունն իր գործունեությունը մեծապես ֆինանսավորում է կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի հաշվին:

2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից: Այն իր իմաստով մոտ է նախորդ գործակցին և ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություններ ունի կազմակերպությունը:

$$Q2 = \frac{\text{Պարտավորություններ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{2194205}{3087625} = 0,71$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 1:

3. Գործող կապիտալ: Այն ցույց է տալիս, թե ընթացիկ ակտիվների որ մասն է ապահովված սեփական կապիտալով և երկարաժամկետ պարտավորություններով կամ երկարաժամկետ հիմունքներով ներգրավված միջոցների որ մասն է ուղղված ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանը:

$$Q4 = \text{Ընթացիկ ակտիվներ-Կարճ պարտավորություններ} = 2708720 - 2194205 = 514515$$

4. Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից: Այն ցույց է տալիս, թե ընկերության ընթացիկ ակտիվների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների հաշվին:

$$Q5 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}} = \frac{514515}{2708942} = 0,19$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0,1:

5. Պաշարների գործող կապիտալով ապահովվածության գործակից: Այն ցույց է տալիս ընկերության ապրանքանյութական պաշարների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների հաշվին:

$$Q6 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Պաշարներ}} = \frac{514515}{2708942} = 0,28$$

Պաշարներ**1866835**

6. Սեփական կապիտալի մանրայնության գործակից: Այն ցույց է տալիս, թե ընկերության սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցների որ մասն է գտնվում շարժունակ (մոբիլ) վիճակում:

$$q7 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{514515}{3087625} = 0,172$$

Հաշվեկշռի իրացվելիությունը բնութագրող ցուցանիշներն են.

1. Ընթացիկ իրացվելիության գործակից: Այն ցույց է տալիս ընկերության կարճաժամկետ պարտավորությունների ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է ընթացիկ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ:

$$q8 = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} = \frac{2708720}{2194205} = 1,23$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 2 է: 514515

Մեր կարծիքով, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների վրա նախորդ մասերում հիշատակված հարցերի ազդեցությունից, ֆինանսական հաշվետվությունները ընկերության ֆինանսական վիճակի՝ առ 1-ը հունվարի 2012թ.-ի դրությամբ, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների ու դրամական հոսքերի մասին տալիս են իրական պատկերը կամ բոլոր էական առումներով ճիշտ են ներկայացված:

Վերստուգող հանձնաժողովը գտնում է, որ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար պետք է ուժեղացվի ընկերության ֆինանսական կառավարումը, մշակվի մարքեթինգի քաղաքականության հայեցակարգ, վարվի գնային ճկուն քաղաքականություն, իրականացվի ոսկու կորստի ապահովագրման քաղաքականություն՝ օգտագործելով ֆինանսական անհրաժեշտ գործիքները, մշակվի ծրագիր արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքներն ընկերության համար քիչ խոցելի դարձնելու համար, միջոցներ ձեռնարկվի հաստատուն ծախսերը կրճատելու ուղղությամբ

Վերստուգող հանձնաժողովի

Նախագահ

L.. Սուքիասյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի ընդհանուր տարեկան 29.06.12 թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 15 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ,
որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից / 1 095 340 հատ /
հանդիսանում են 969776 բաժնետոմսի սեփականատեր, կամ ժողովին ներկա էին 88,5%
ծայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ժամհարյան

Ա. Ներսիսյան

Գ . Ղազարյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՎԱՆ-1 «ԳՆՈՍՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի ընդհանուր տարեկան 29.06.12թ. Ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց հետևյալ
արդյունքները. (առկա 969776 ձայների քանակից)

1. Ընկերության 2011թ. գործնության տարեկան հաշվետվության հաստատումը.
կողմ - 969776 դեմ - 0 ձեռնպահ - 0
Ընկերության 2011թ. տարեկան գործնությունը հաստատվեց:

2. Ընկերության 2011 թվականի ֆինանսատնտեսական գործնությունը ամփոփոխ
տարեկան հաշվետվության հաստատումը.
կողմ - 969776 դեմ - 0 ձեռնպահ - 0
Ընկերության 2010թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործնությունը
հաստատվեց:

3. Ընկերության 2011թ. շահույթի և վնասի հաշվետվության հաստատումը.
կողմ - 969776 դեմ - 0 ձեռնպահ - 0
Ընկերության շահույթի և վնասի հաշվետվությունը հաստատվեց:

4. Ընկերության Վերստուգողի 2011 թվականի հաշվետվության հաստատումը.
կողմ - 969776 դեմ - 0 ձեռնպահ - 0

5. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրության
ընտրության արդյունքում, որը կատարվել է գումարային (կոմուլյատիվ) ձևով բաժնետերերը
իրենց ձայները բաշխել են հետևյալ կերպ.
Ջրանտ Շիրինյան կողմ` 969776

Էմիլ Գրիգորյան	կողմ` 969776
<i>Արմեն Գրիգորյան</i>	<i>կողմ` 969776</i>
Սեդա Հակոբյան	կողմ` 969776
Հովհաննես Եսայան	կողմ` 969776
Էդուարդ Մաթևոսյան	կողմ` 969776
Արկադի Տարգաշով	կողմ` 969776

Ընկերության տնօրենների խորհրդի անդամների հետևյալ թեկնածուները ընտրվել են.

- Հրանտ Շիրինյան - խորհրդի անդամ - բժիշկ
- Էմիլ Գրիգորյան - խորհրդի անդամ - ԵՈԳ -1 « Գնունոն » ԲԲԸ Գլխ. տնօրեն,
- Արմեն Գրիգորյան* - *խորհրդի անդամ - ԵՈԳ -1« Գնունոն » ԲԲԸ Ս / Տ տնօրեն*,
- Սեդա Հակոբյան - խորհրդի անդամ - ճարտարագետ ,
- Հովհաննես Եսայան - խորհրդի անդամ - ԵՈԳ -1 « Գնունոն » ԲԲԸ Ա / Տ տնօրեն,
- Էդուարդ Մաթևոսյան - խորհրդի անդամ - « ԵՈԳ » ԲԲԸ իրավաբան ,
- Արկադի Տարգաշով - խորհրդի անդամ - « ԵՈԳ » ԲԲԸ փականագործ:

Հանձնաժողովի անդամներ`

- Ա. Ժամհարյան
- Ա. Ներսիսյան
- Գ . Ղազարյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի ընդհանուր տարեկան 28.06.11թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 15 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ,
որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից

/ 1 095 340 հատ հանդիսանում են 969776 բաժնետոմսի սեփականատեր, կամ
ժողովին ներկա էին 86,17% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է
քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ օրակարգի հինգ
հարցերը բաժնետերերը հաստատել են հետևյալ կերպ.

1. կետ – կողմ 969776 ձայն
2. կետ – կողմ 969776 ձայն
3. կետ – կողմ 969776 ձայն
4. կետ – կողմ 969776 ձայն

5.կետ – Քանի որ տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են գումարային
/կունուլյատիվ/ ձևով, բաժնետերերն իրենց ձայները բաշխել են հետևյալ կերպ.՝

Տնօրենների խորհրդի անդամներ՝

- | | | |
|----------------------|---------------|--------|
| 1. Զրանտ Շիրինյան - | խորհրդի անդամ | |
| 2. Էմիլ Գրիգորյան | կողմ՝ | 969776 |
| 3. Արմեն Գրիգորյան | կողմ՝ | 969776 |
| 4. Սեդա Զակոբյան | կողմ՝ | 969776 |
| 5. Զովհաննես Եսայան | կողմ | 969776 |
| 6. Էդուարդ Մաթևոսյան | կողմ՝ | 969776 |
| 7. Արկադի Տարգաշով | կողմ՝ | 969776 |

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ժամհարյան

Ա. Ներսիսյան

Գ . Ղազարյան

**ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

29 հունիսի 2012թ.

1. Ընկերության 2011թվականի գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2011թ. ֆինանսական գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության 2011թ. շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
4. Ընկերության Վերստուգողի 2011թ հաշվետվության հաստատում:
5. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա.թ. հունիսի 29 -ին, ժամը 16⁰⁰ «ԵՈԳ» ԲԲԸ (Արշակունյաց 12) տեղի կունենա Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՍՈՆ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

- ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`**
1. Ընկերության 2011թ. գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
 2. Ընկերության 2011թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
 3. Ընկերության շահույթի և վճարի հաշվի հաստատում:
 4. Ընկերության Վերստուգողի 2011թ.ի հաշվետվության հաստատում:
 5. Տնօրենների խորհուրդի անդամների ընտրություն:

Այլ տեղեկությունների համար դիմել «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ, հեռ. 52-53-21:

Խորհուրդ

Ընկերության տնօրենների

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ -1 « Գնումն » ԲԲԸ կողմից
հրապարակված տեղեկությունների մասին

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ -1 « Գնումն » ԲԲԸ ինտերնետային կայքում
հրապարակել է

- 2007թ. տարեկան հաշվետվությունը
- 2008թ.եռամսյակային միջանկյալ հաշվետվություններ
- 2008թ.միջանկյալ ընթացիկ հաշվետվություններ
- 2008թ. տարեկան հաշվետվությունը
- 2009թ.եռամսյակային միջանկյալ հաշվետվություններ
- 2009թ.միջանկյալ ընթացիկ հաշվետվություններ
- 2009թ. տարեկան հաշվետվությունը
- 2010թ.միջանկյալ ընթացիկ հաշվետվություններ
- 2010թ. եռամսյակային միջանկյալ հաշվետվություններ
- 2010թ. տարեկան հաշվետվությունը
- 2011թ.միջանկյալ ընթացիկ հաշվետվություններ
- 2011թ. եռամսյակային միջանկյալ հաշվետվություններ
- 2011թ. տարեկան հաշվետվությունը